Պատմվածք, Արձակ, Ֆրանսիական գրականություն

16+

Թարգմանիչ՝ Վահե Միքայելյան

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ

EL VERDUGO

Մարտինես դը լա Ռոզային[1]

Մենդա փոքրիկ քաղաքի զանգակատունը հենց նոր հնչեց գիշերվա տասներկուսը: Այդ միջոցին, մի երիտասարդ ֆրանսիացի սպա, Մենդայի դղյակը շրջապատող այգիների երկար ճեմելավայրի պատվարին հենված՝ կարծես թաղվել էր ավելի խոր մտախոհության մեջ, քան դա համապատասխանում էր ռազմական կյանքի անհոգությանը: Բայց պետք է նկատել, որ մտախոհության համար դրանից ավելի հարմար ժամ, տեղ ու գիշեր չէր կարող լինել:

Իսպանիայի գեղեցիկ երկինքը լազուրի կամար էր կազմում նրա գլխի վերևը: Աստղերի փայլփլումը և լուսնի մեղմ լույսը լուսավորում էին մի չքնաղագեղ ձոր, որը պչրանքով տարածվում էր նրա ոտքերի առջև: Հենված մի ծաղկած նարնջենու՝ գումարտակի հրամանատարը կարող էր տեսնել իրենից հարյուր քայլ ներքև գտնվող Մենդա քաղաքը, որը թառած այն քարաժայռի ստորոտում, որի վրա շինված էր Մենդայի դղյակը, կարծես պաշտպանված էր հյուսիսային քամիներից: Շուռ տալով գլուխը՝ նա տեսնում էր ծովը, որի փայլող ջրերը շրջապատում էին պեյզաժն արծաթյա լայն շեղբով: Դղյակը լուսազարդված էր: Սպային էին հասնում պարահանդեսի ուրախ աղմուկը, նվագախմբի հնչյունները, մի քանի սպաների և նրանց պարուհիների ծիծաղը, խառնվելով ալիքների հեռավոր շշունջին:

Գիշերվա զովությունը մի տեսակ եռանդ էր ներշնչում ցերեկվա շոգից հոգնած նրա մարմնին: Վերջապես այգիներում տնկված էին այնպիսի բուրումնավետ ծառեր և այնպիսի քաղցրաբույր ծաղիկներ, որ երիտասարդ սպային թվում էր, թե սուզվել է անուշահոտությունների լոգանքի մեջ:

Մենդայի դղյակը պատկանում էր Իսպանիայի բարձր ազնվականներից մեկին, որն այդ ժամանակ իր ընտանիքի հետ միասին ապրում էր այդտեղ: Ամբողջ երեկույթի ընթացքում, աղջիկներից անդրանիկը դիտել էր սպային այնպիսի թախծոտ հետաքրքրությամբ, որ իսպանուհու արտահայտված վշտակցության զգացմունքը կարող էր ֆրանսիացու մեջ երազանք առաջացնել: Կլարան գեղեցիկ էր և չնայած այն բանին, որ երեք եղբայր և մի քույր ևս ուներ, այնուամենայնիվ մարկիզ Լեգանյեզի հարստությունը բավական պատկառելի էր, որպեսզի Վիկտոր Մարշանը համոզվեր, թե դեռատի աղջիկը հարուստ օժիտ պետք է ունենա: Բայց ինչպե՞ս նա կարող էր հավատալ, որ իրեն՝ Փարիզի մի մթերավաճառի որդուն, կարող է պատկանել մի աղջիկ, որի հայրը Իսպանիայում իր ազնվական ծագումով ամենից ավելի պարծեցող մի մարդ էր: Եվ, բացի դրանից, չէ՞ որ ֆրանսիացիներին ատում էին:

Այդ նահանգը կառավարող գեներալ Գ...տ...ր-ն կասկածելով, որ մարկիզն ըմբոստություն է պատրաստում հոգուտ Ֆերդինանդ VII-ի[2], Վիկտոր Մարշանի հրամանատարության տակ գտնվող գումարտակին նշանակել էր բանակել փոքրիկ Մենդա քաղաքում՝ զսպելու համար հարևան դաշտավայրերի բնակիչներին, որոնք ենթարկվում էին մարկիզ Լեդանյեզին: Մարշալ Նեյից[3] հենց նոր ստացված մի գրություն երկյուղ էր հայտնում, որ անգլիացիները կարող են մոտ օրերս ցամաքահանում կատարել և հայտնում էր, որ մարկիզը հարաբերություն է պահպանում Լոնդոնի

կառավարության հետ: Ուստի, հակառակ իսպանացիների կողմից Վիկտոր Մարշանին և նրա զինվորներին ցույց տված լավ ընդունելության, երիտասարդ սպան ուշի-ուշով հսկողություն էր կատարում: Ուղղվելով այս ճեմելավայրի կողմը, ուր նա գալիս էր քննելու քաղաքի դրությունն ու իր վերահսկողությանը հանձնված շրջանները, նա ինքն իրեն հարցնում էր, թե ինչպե՛ս կարելի է բացատրել այն բարեկամությունը, որը մարկիզը չէր դադարում իրեն ցույց տալուց և ինչպե՛ս երկրի խաղաղությունը կարող էր համատեղվել իր գեներալի անհանգստության հետ: Բայց մի քանի րոպե էր, ինչ նա այլևս դրանց մասին չէր մտածում. խոհեմության զգացմունքը և խիստ օրինական հետաքրքրությունն արտաքսել էին երիտասարդ հրամանատարի գլխից այդ մտքերը:

Հենց այդ րոպեին նա նկատեց քաղաքում բավական մեծ թվով լույսեր: Չնայած այն բանին, որ այդ օրը Սուրբ Հակոբի տոնն էր, բայց դեռ առավոտյան նա հրամայել էր, որ քաղաքի լույսերը պետք էր հանգցնեն կանոնագրում նշանակված ժամին: Միայն դղյակն էր բացառված այդ կարգադրությունից: Նա տեսավ դեսուդեն, իրենց սովորական տեղերում կանգնած իր զինվորների սվինների փայլելը. բայց այնպիսի հանդիսավոր լռություն էր տիրում, որ ոչ մի բան չէր ազդարարում, թե իսպանացիները կարող են այդ տոնի առթիվ հարբեցողության անձնատուր լինել: Ջանալով բացատրել այդ օրինազանցությունը, որի համար բնակիչները հանցավոր էին դառնում, նա այդ հանցանքի ավելի անհասկանալի խորհրդավորություն գտավ, քանի որ հատուկ սպաներ էր նշանակել և գիշերային ոստիկանությունն պարեկությունը նրանց հանձնել: Երիտասարդական անզսպությամբ նա պատրաստվում էր ցատկելու մի խրամատի վրայով, որպեսզի այդ ձևով ավելի արագ իջնի (քան սովորական ճանապարհով) և ավելի շուտ հասնի դղյակի կողմը եղած քաղաքի դարպասի մոտի փոքրիկ պահակատեղը, երբ մի թույլ աղմուկ նրան կանգնեցրեց իր վազքի ընթացքում: Նրան թվաց, որ ծառուղիների ավազը խշրտում է կանացի թեթև քայլերի տակ: Նա շրջեց գլուխը և ոչինչ չտեսավ, բայց նրա հայացքը գամվեց օվկիանոսի արտասովոր փայլի վրա: Հանկարծ մի այնպիսի չարագուշակ տեսարան տեսավ նա այդտեղ, որ զարմանքից մնաց անշարժ և սկսեց դատապարտել իր սխալ տպավորությունները: Լուսնի սպիտակ շողերը հնարավորություն տվին նրան առագաստներ նկատել բավական մեծ հեռավորության վրա: Նա սարսռաց և աշխատեց համոզել ինքն իրեն, որ այդ տեսիլքն ալիքների քմայքի և լուսնի լարած տեսողական որոգայթ է: Այդ միջոցին մի խռպոտ ձայն արտասանեց սպայի անունը. նա նայեց խրամատի կողմը և տեսավ, որ դանդաղ բարձրանում է դղյակ գալու ժամանակ իրեն ընկերակցած զինվորի գլուխը:

— Այդ դո՞ւք եք, պարո՛ն հրամանատար:

— Այո, ի՞նչ կա,— պատասխանեց ցած ձայնով երիտասարդը՝ գիտակցելով, որ ինչ-որ նախազգացում թելադրում է գաղտնապահորեն գործել:

— Այս անպիտանները եռ են գալիս որդերի նման, և ես շտապել եմ, եթե թույլ կտաք, հաղորդելու ձեզ իմ փոքր դիտողությունները:

— Խոսի՛ր,— պատասխանեց Վիկտոր Մարշանը:

— Հենց նոր հետևում էի դղյակի մարդկանցից մեկին, որը լապտերը ձեռքին ուղղվեց այս կողմը: Այս պահին լապտերը վրդովեցնելու աստիճան կասկածելի բան է: Ես չեմ կարծում, որ այս ժամին այդ քրիստոնյան մոմ վառելու կարիք ունենա… «Նրանք ուզում են մեզ ուտել»,— ասացի մտքումս և սկսեցի հետևել նրան: Այդպիսով, պարո՛ն հրամանատար, սրանից երեք քայլի վրա, ժայռի գլխին գտա չոր ճյուղերի մի փոքրիկ դեզ:

Մի սոսկալի աղմուկ, որն անմիջապես պայթեց քաղաքում, ընդհատեց զինվորին: Մի հանկարծակի լույս լուսավորեց հրամանատարին: Խեղճ զինվորը մի գնդակ ստացավ գլխին և ընկավ: Չոր

փայտերի և հարդի մի խարույկ բոցավառվում էր հրդեհի նման, երիտասարդից տասը քայլի վրա: Պարահանդեսի դահլիճի երաժշտությունն ու ծիծաղները այլևս չլսվեցին: Հառաչանքներից ընդհատվող մի մեռելային լռություն հանկարծակի փոխարինել էր աղմուկին և տոնական երաժշտությանը: Թնդանոթի մի հարված որոտաց օվկիանոսի հարթ մակերևույթի վրա: Սառը քրտինքը հոսեց երիտասարդ սպայի ճակատի վրայով: Նա առանց սրի էր:

Վիկտոր Մարշանը հասկացավ, որ իր զինվորները կոտորվել են, և անգլիացիները պատրաստվում են ցամաք իջնել: Պատկերացրեց իրեն պատվազրկված և ռազմական դատարանին հանձնված, եթե միայն կենդանի մնար: Այդ ժամանակ աչքերով չափեց ձորի խորությունը և պատրաստվում էր այնտեղ խոյանալ, երբ Կլարան բռնեց նրա ձեռքը:

— Փախե՛ք,— ասաց նա,— եղբայրներս գալիս են իմ հետևից ձեզ սպանելու համար: Ժայռի ստորոտում, այս կողմից, դուք կգտնեք Ժուանիտոյի անդալուզյան ձին: Մի՛ դանդաղեք:

Եվ նրան առաջ հրեց: Երիտասարդն ապշած մի րոպե դիտեց նրան, բայց անմիջապես հնազանդելով պաշտպանվելու բնազդին, որը երբեք չի թողնում մարդուն, նույնիսկ ամենաուժեղին, նետվեց պարտեզն ու բռնեց ցույց տրված ուղղությունը և վազեց ժայռերի արանքներով, որտեղից միմիայն այծերն էին անցկացել մինչ այդ: Նա լսեց Կլարայի ձայնը, որ կանչում էր իր եղբայրներին նրան հետապնդելու համար, ապա լսեց իրեն սպանելու եկողների ոտնաձայները և բազմաթիվ հրազեններից արձակված գնդակների սուլոցն իր ականջների շուրջը: Բայց և այնպես նա հասավ ձորը, գտավ ձին այնտեղ, հեծավ և անհետացավ կայծակի արագությամբ:

Մի քանի ժամից երիտասարդ սպան հասավ գեներալ Գ...տ...ր-ի բանակատեղին, գտավ նրան իր շտաբի սպաների հետ ճաշելիս:

— Ես ձեզ բերում եմ իմ գլուխը,— բացականչեց գումարտակի հրամանատարը՝ ներս մտնելով գունատ ու խորտակված:

Նա նստեց և պատմեց սոսկալի եղելությունը: Մի սարսափելի լռություն հաջորդեց նրա պատմությանը:

— Ես ձեզ գտնում եմ ավելի շուտ դժբախտ, քան թե ոճրագործ,— պատասխանեց ի վերջո ահարկու գեներալը:— Դուք պատասխանատու չեք իսպանացիների ոճիրների համար, և եթե մարշալն ուրիշ վճիռ չկայացնի ձեր մասին, ես անձամբ ներում եմ ձեզ:

Այս խոսքերը սոսկ մի թեթև մխիթարություն պատճառեցին դժբախտ սպային:

— Իսկ երբ կա՛յսրն իմանա այս բանը,— բացականչեց նա:

— Նա պիտի ուզենա ձեզ գնդակահարել տալ,— ասաց գեներալը,— բայց մենք կնայենք: Իսկ այժմ այլևս դրա մասին չխոսենք,— ավելացրեց նա խիստ շեշտով,— այլ մտածենք լուծել դրա վրեժը, որ մի փրկարար սարսափ է դրոշմում այս երկրում, որտեղ կռվում են վայրենիների նման:

Մի ժամ հետո, մի ամբողջ գունդ, հեծելազորի մի ջոկատի և հրետանու մի մարտկոցի ուղեկցությամբ, առաջ էր շարժվում: Գեներալն ու Վիկտոր Մարշանը գնում էին այդ զորամասի առջևից: Զինվորներն իմացած լինելով իրենց ընկերների կոտորածը՝ համակվել էին անօրինակ զայրույթով: Մենդա քաղաքը գլխավոր բանակատեղից բաժանվող հեռավորությունը կտրվեց անհավատալի արագությամբ: Ճանապարհի բոլոր գյուղերը գեներալը գտավ զինված: Այդ ողորմելի ավանները մեկ-մեկ պաշարվեցին և բնակիչների տասից մեկը գնդակահարվեց:

Անբացատրելի ճակատագրականությամբ անգլիական նավերը կանգ էին առել բաց ծովում, առանց առաջանալու. բայց հետո պարզվեց, որ այդ նավերը սոսկ հրետանի էին փոխադրում և ավելի արագ էին ընթացել, քան թե մնացած փոխադրանավերը: Այնպես որ, Մենդա քաղաքը, զրկվելով իր սպասած պաշտպաններից, որոնց հուսացել էին անգլիական առագաստանավերի երևալը տեսնելով, պաշարվեց և գրավվեց ֆրանսիական զորամասերի կողմից՝ գրեթե առանց դիմադրության: Ահաբեկված բնակիչները որոշեցին անձնատուր լինել առանց պայմանների: Պիրենյան թերակղզում բացառիկ չեղող անձնվիրությամբ, ֆրանսիացիներին սպանողները ծանոթ լինելով գեներալի խստությանը, որ կարող էր Մենդա քաղաքը հրի մատնել և ազգաբնակությանը սրի անցկացնել տալ, մտադրվեցին ինքնակամ անձնատուր լինել գեներալին: Նա ընդունեց այս առաջարկը՝ պայմանով որ դղյակի ամբողջ բնակիչները, ամենավերջին սպասավորից մինչև մարկիզը, իրեն հանձնվեն: Երբ քաղաքն ընդունեց անձնատվության այս պայմանը, գեներալը խոստացավ մնացած ազգաբնակությանը ներում շնորհել և արգելել իր զինվորներին քաղաքը կողոպտել կամ հրկիզել: Նշանակվեց մի խոշոր ռազմական տուգանք, ըստ որում ամենահարուստ քաղաքացիները պատանդ վերցվեցին ապահովելու համար վճարումը, որը քսանչորս ժամում պետք է կատարվեր:

Գեներալը ձեռք առավ բոլոր նախազգուշական միջոցներն իր զորամասերի ապահովության համար, և երկիրը պաշտպանելու ու զորքը պատրաստ պահելու նպատակով՝ հրաժարվեց զինվորներին տներում տեղավորելուց: Նրանց բանակեցնելուց հետո՝ նա բարձրացավ դղյակը և գրավեց զինվորական կարգով: Լեգանյեզ ընտանիքի անդամները և ծառաները զգուշությամբ հսկողության տակ առնվեցին և կապկպվեցին, ապա փակեցին նրանց այն սենյակում, ուր տեղի էր ունեցել պարահանդեսը: Այդ դահլիճի պատուհաններից հեշտությամբ կարելի էր ընդգրկել քաղաքի վրա նայող ճեմելավայրը: Շտաբը տեղավորվեց հարևան դահլիճներից մեկում, որտեղ գեներալը ժողով գումարեց, խորհրդակցելու համար, ամենից առաջ, անգլիացիների ցամաքահանման դեմ ձեռք առնվելիք միջոցների մասին: Իր համհարզներից մեկին նա մարշալ Նեյի մոտ ուղարկեց, պատվիրելով նրան, որ հրետանին հաստատեն ծովեզերքի վրա. ապա գեներալն իր շտաբի հետ զբաղվեց գերիներով: Երկու հարյուր իսպանացիներ, որոնց հանձնել էին բնակիչները, իսկույն ևեթ հրացանազարկ արվեցին ճեմելավայրի վրա: Այս ռազմական մահապատժից հետո գեներալը հրամայեց դահլիճում եղած մարդկանց թվին համապատասխանող քանակությամբ կախաղաններ հաստատել ճեմելավայրի վրա և կանչել քաղաքի դահճին: Վիկտոր Մարշանն օգուտ քաղելով մինչճաշյան ժամանակամիջոցից՝ գնաց բանտարկյալներին տեսնելու և քիչ հետո եկավ գեներալի մոտ:

— Ես եկել եմ,— ասաց նա հուզված ձայնով,— ձեզնից շնորհ խնդրելու:

— Դո՞ւք,— հարցրեց գեներալը դառն հեգնանքի շեշտով:

— Ավա՛ղ,— պատասխանեց Վիկտորը,— տխուր շնորհներ եմ խնդրում, Մարկիզը տեսնելով կախաղանների հաստատվելը, հույս ունի, որ դուք կփոխեք մահապատժի այդ ձևն իր ընտանիքի համար, և խնդրում է, որ ազնվականներին գլխատել տաք:

— Թող այդպես լինի,— ասաց գեներալը:

— Նրանք խնդրում են, որ կրոնական մխիթարություն շնորհվի իրենց և կապանքներն արձակվեն. խոստանում են փախուստի փորձ չանել:

— Համաձայն եմ, բայց դուք պատասխանատու եք նրանց համար:

— Ծերունին ձեզ կշնորհի նաև իր ամբողջ հարստությունը, եթե համաձայնեք խնայել նրա երիտասարդ որդուն:

— Ճի՞շտ,— պատասխանեց գեներալը:— Նրա ամբողջ հարստությունը պատկանում է արդեն Ժոզեֆ թագավորին:

Նա կանգ առավ: Արհամարհական մի միտք կնճռոտեց նրա ճակատը և նա ավելացրեց.

— Ես ուզում եմ գերազանցել նրա ցանկությունը: Գուշակում եմ նրա վերջին խնդրանքի կարևորությունը: Լա՛վ, թող նա գնի իր տոհմի հավիտենականությունը, բայց թող Իսպանիան ընդմիշտ հիշի նրա դավաճանությունն ու պատիժը: Ես թողնում եմ նրա հարստությունն ու կյանք եմ շնորհում իր զավակներից նրա՛ն, ով կհամաձայնի կատարել դահճի պաշտոնը… Գնացեք և ինձ էլ ոչինչ մի ասեք նրանց մասին:

Ճաշը մատուցվեց: Սպաները սեղան նստած՝ հագեցնում էին հոգնածությունից սրված իրենց ախորժակը: Նրանցից մեկը միայն՝ Վիկտոր Մարշանը, բացակայում էր խնջույքից: Երկար երկմտությունից հետո՝ նա մտավ այն սենյակը, որտեղ հեծեծում էր Լեգանյեղշների հպարտ ընտանիքը և մի տխուր հայացք նետեց այն տեսարանի վրա, որ ներկայացնում էր դահլիճն այդ միջոցին, որտեղ անցած երեկո նա տեսել էր, թե ինչպես էին պտտվում վալսի թափով տարված երկու դեռատի աղջիկների և երեք երիտասարդների գլուխները: Նա սարսռաց՝ մտածելով, որ քիչ հետո այդ գլուխները պիտի ընկնեին դահճի սրի հարվածից: Կապված իրենց ոսկեզօծ աթոռներին, երեք տղաները և երկու աղջիկները գտնվում էին բացարձակ անշարժության մեջ: Ութ ծառաները կանգնած էին՝ ձեռքները կապված կռնակին: Այս տասնհինգ հոգին իրար էին նայում ծանրորեն և նրանց աչքերը հազիվ էին մատնում իրենց հուզող զգացմունքները: Մի քանիսի ճակատի վրա կարելի էր կարդալ խոր համակերպություն և ցավ՝ ձեռնարկումի ձախողման առթիվ: Անշարժացած զինվորները հսկում էին նրանց՝ միաժամանակ հարգելով այդ ոխերիմ թշնամիների վիշտը: Երբ Վիկտոր Մարշանը ներս մտավ, հետաքրքրության մի շարժում կենդանացրեց նրանց դեմքը: Նա հրամայեց արձակել դատապարտյալների կապանքները, և ինքն անձամբ արձակեց Կլարայի կապանքները, որոնցով աղջկան ամրացրել էին աթոռին. աղջիկը տխրագին ժպտաց: Սպան չկարողացավ զսպել իրեն դեռատի աղջկա թևերին հպվելուց և հիացմամբ դիտեց նրա սև վարսերը և ճկուն իրանը: Կլարան ճշմարիտ իսպանուհի էր. նա իսպանական գույն և իսպանական աչքեր ուներ, երկար, կամարաձև հոնքեր, իսկ բիբերն ավելի սև էին, քան ագռավի թևերը:

— Հաջողություն ունեցա՞ք,— հարցրեց Կլարան՝ նրան ուղղելով մեկն այն մահագույժ ժպիտներից, որի մեջ դեռ երևում էր մանկամարդ աղջկա հոգին:

Վիկտորը չկարողացավ իր հուզմունքը զսպել: Նա մեկ առ մեկ նայեց երեք եղբայրներին և Կլարային: Եղբայրներից անդրանիկը երեսուն տարեկան էր: Փոքր մարմնով, բավական թուլակազմ, հպարտ և անփույթ արտահայտությամբ, որոշ ազնվական շարժուձևով և կարծես թե օտար չէր այն զգացմունքների նրբությանը, որը մի ժամանակ այնքան հռչակավոր դարձրեց իսպանական նրբակիրթ բարքերը: Նրա անունը Ժուանիտո էր: Երկրորդը՝ Ֆիլիպը, մոտավորապես քսանամյա էր և նման էր Կլարային, իսկ կրտսերը՝ Մանուելը, ութ տարեկան էր: Նկարիչը նրա դիմագծերում կարող էր գտնել մի քիչ այն հռոմեական հաստատակամությունից, որ Դավիդը հաղորդել է երեխաներին իր ռեսպուբլիկական նկարներում: Մարկիզի սպիտակ մազերով ծածկված ծեր գլուխը կարծես վերցված էր Մուրիլյոյի[5] նկարներից: Այս պատկերը տեսնելով՝ երիտասարդ սպան շարժեց գլուխը, հույս չունենալով, որ այդ անձնավորություններից որևէ մեկը հանձն կառնի կատարել գեներալի առաջարկը. այնուամենայնիվ նա համարձակվեց հայտնել

Կլարային: Իսպանուհին նախ սարսռաց, բայց գտնելով իսկույն իր հպարտ արտահայտությունը՝ գնաց հոր մոտ և ծունկ չոքեց նրա առջև:

— Հա՛յր,— ասաց նա,— երդվեցրեք Ժուանիտոյին, որ նա պարտավոր է հավատարմորեն հնազանդվել ձեր հրամաններին, և մենք գոհ կլինենք:

Մարկիզուհին ցնցվեց հույսի հավանականությունից, բայց երբ ծռվելով ամուսնու կողմը՝ լսեց սոսկալի գաղտնիքը, ուշաթափվեց: Ժուանիտոն հասկացավ ամեն բան և մի ոստյուն գործեց, ինչպես առյուծը վանդակում: Վիկտորը հանձն առավ հեռացնել զինվորներին, երբ կատարելապես հնազանդելու խոստում ստացավ մարկիզից: Ծառաներին դուրս տարան ու հանձնեցին դահճին, որը նրանց կախեց: Երբ ընտանիքի վրա որպես հսկող միայն Վիկտորը մնաց, ծերունի հայրը ոտքի կանգնեց:

— Ժուանի'տո,— ասաց նա:

Ժուանիտոն պատասխանեց միայն գլխի շարժումով, որը մերժումի համարժեք էր, նորից ընկավ իր աթոռի վրա և նայեց ծնողներին չոր ու ահարկու հայացքով: Կլարան գնաց և նստեց նրա ծնկներին:

— Իմ սիրելի՛ Ժուանիտո,— ասաց նա ուրախ շեշտով, փաթաթելով թևը նրա վզին և համբուրելով նրա թարթիչները,— եթե դու գիտենայիր, թե ինչքա՛ն քաղցր է ինձ մահը, երբ քեզնից է տրվում: Ես զերծ կլինեմ դահճի ձեռների ատելի հպումից: Դու ինձ կբուժես այն ցավերից, որ սպասում էին ինձ և... իմ սիրելի՛ Ժուանիտո, չէ՞ որ դու չէիր ուզում, որ ես ուրիշի պատկանեմ, ուրե՛մն…

Նրա թավշանման աչքերը մի կրակե հայացք նետեցին Վիկտորին, կարծես թե դրանով ուզում էր Ժուանիտոյի սրտում ատելություն արթնացնել դեպի ֆրանսիացիները:

— Քաջությո՛ւն ունեցիր,— ասաց Ֆիլիպ եղբայրը,— ապա թե ոչ մեր գրեթե արքայական ցեղը կմարի:

Կլարան հանկարծ վեր կացավ, Ժուանիտոյի շուրջը կազմված խումբը ցրվեց և այս իրավացիորեն ըմբոստ որդին տեսավ իր առջև կանգնած ծերունի հորը, որը հանդիսավոր շեշտով գոչեց.

— Ժուանիտո՛, ես հրամայո՛ւմ եմ քեզ:

Որովհետև երիտասարդ կոմսն անշարժ մնաց, ապա հայրն ընկավ նրա ոտքերը: Կլարան, Ֆիլիպն ու Մանուելը ակամա հետևեցին նրան: Ամենքն էլ ձեռքները պարզեցին դեպի այն մարդը, որը պիտի փրկեր ընտանիքը մոռացումից և կարծես կրկնում էին հոր հետևյալ խոսքերը.

— Զավա՛կս, միթե ի հայտ չե՞ս բերելու իսպանական խիզախությունն ու ճշմարիտ հոգեկան զորությունը: Ուզում ես, որ երկա՞ր ծնկաչոք մնամ, որպեսզի դու քննես կյանքդ ու տառապանքներդ:— Մի՞թե սա իմ որդին է, տիկին,— ավելացրեց ծերունին՝ մարկիզուհու կողմը դառնալով:

— Նա կհամաձայնի՛,— բացականչեց հուսահատությամբ մայրը՝ նայելով Ժուանիտոյին, որը թարթիչների մի շարժում արեց, և որի նշանակությունը միայն մայրն էր հասկանում:

Մարիկիտան, երկրորդ աղջիկը չոքել էր մոր առջև ու զրկել նրան իր թույլ թևերով, և որովհետև աղեկտուր լաց էր լինում, փոքր եղբայր Մանուելը եկավ նրան հանդիմանելու: Այդ միջոցին ներս մտավ դղյակի խոստովանահայրը, որին անմիջապես շրջապատեց ամբողջ ընտանիքը. նրան տարան Ժուանիտոյի մոտ: Վիկտորն այլևս չկարողացավ դիմանալ այդ տեսարանին. նա մի նշան

արեց Կլարային և շտապեց գեներալի մոտ՝ մի վերջին փորձ էլ անելու: Նա գեներալին գտավ լավ տրամադրության մեջ, խնջույքում, սպաների հետ խմելիս, որոնք սկսում էին արդեն զվարճալի նյութերի մասին խոսել:

Մի ժամ հետո Մենդայի երևելի բնակիչներից հարյուր հոգի եկան ու շարվեցին ճեմելավայրի վրա, վկա լինելու, ըստ գեներալի հրամանի, Լեգանյեզ ընտանիքի մահապատժին: Զինվորների մի ջոկատ եկավ շրջապատելու իսպանացիներին: Նրանց կանգնեցրին այն կախաղանների տակ, որոնցից կախել էին մարկիզի ծառաներին: Այդ քաղաքացիների գլուխները համարյա դիպչում էին այդ նահատակների ոտքերին: Նրանցից երեսուն քայլի վրա մի կոճղ էր բարձրանում և դրա վրա փայլում էր մի թուր: Դահիճն այնտեղ էր, պատրաստ, Ժուանիտոյի հրաժարվելու դեպքում, իր արհեստը կիրառելու: Քիչ հետո, խոր լռության մեջ, իսպանացիները լսեցին բազմաթիվ մարդկանց ոտնաձայներ, զինվորների մի փոքր խմբի քայլվածքի համաչափ աղմուկը և նրանց հրացանների թեթև թնդյունը: Այս տարբեր ձայները խառնվել էին սպաների խնջույքի ուրախ շեշտերին, ճիշտ այնպես, ինչպես անցյալ օրվա պարահանդեսի պարերը քողարկել էին այդ արյունոտ դավաճանության պատրաստությունները: Բոլոր հայացքներն ուղղվեցին դղյակի կողմը, որտեղից դուրս էր գալիս ազնվական ընտանիքն անհավատալի հաստատամտությամբ: Ամենքի ճակատներն էլ պայծառ էին և խաղաղ: Նրանցից մեկը միայն, գունատ ու խորտակված, հենվել էր քահանային, որը շռայլում էր նրան կրոնի բոլոր մխիթարությունները: Միայն նա էր ապրելու: Դահիճը հասկացավ, ինչպես նաև ամենքը, որ Ժուանիտոն մի օրով ընդունել էր նրա պաշտոնը: Ծեր մարկիզը, նրա կինը, Կլարան, Մարիկիտան ու երկու եղբայրները եկան և ծունկ չոքեցին չարաբաստիկ տեղի վրա, մի քանի քայլ իրարից հեռու: Ժուանիտոյին առաջնորդեց քահանան: Երբ նա կոճղին հասավ, դահիճը քաշելով նրա թևից, մի կողմ տարավ՝ հավանաբար մի քանի հրահանգներ տալու: Խոստովանահայրը զոհերին դասավորեց այնպիսի ձևով, որ նրանք մահապատիժը չտեսնեն: Բայց նրանք ճշմարիտ իսպանացիներ էին, այլայլումի ոչ մի նշան ցույց չտվին և կանգնած մնացին:

Կլարան առաջինը նետվեց դեպի եղբայրը:

— Ժուանի՛տո,— ասաց նա,— խղճա՛ ինձ նվազ արիություն ունենալուս համար, և սկսի՛ր ինձնից:

Այդ րոպեին լսվեց մի մարդու արագ վազքի ոտնաձայնը:

Վիկտորը հասավ մահապատժի վայրը: Կլարան արդեն չոքել էր, և նրա սպիտակ վիզը սրին էր սպասում: Սպան գունատվեց, բայց առաջանալու ուժ ունեցավ:

— Գեներալը կյանքդ կշնորհի, եթե համաձայնես ամուսնանալ ինձ հետ,— ասաց նա ցածր ձայնով:

Իսպանուհին սպայի վրա ուղղեց հպարտությամբ և արհամարհանքով լի մի հայացք:

— Շո՛ւտ արա, Ժուանի՛տո,— ասաց նա խուլ ձայնով:

Նրա գլուխը գլորվեց Վիկտորի ոտքերի մոտ: Մարկիզուհի Լեգանյեզը հարվածի ձայնը լսելիս՝ չկարողացավ զսպել մարմնի գալարումը. դա նրա վշտի միակ արտահայտությունը եղավ:

— Ես լավ եմ չոքել, չէ՞, իմ բարի՛ Ժուանի՛տո,— հարցրեց փոքրիկ Մանուելն իր եղբորը:

— Ա՛, դու լա՞ց ես լինում, Մարիկի՛տա,— ասաց Ժուանիտոն իր քրոջ:

— Օ՛, այո,— պատասխանեց դեռատի աղջիկը:— Ես մտածում եմ քո մասին, իմ խե՛ղճ Ժուանիտո, դու շա՛տ դժբախտ կլինես առանց մեզ:

Ապա երևաց մարկիզի հաղթանդամ կերպարանքը: Նա նայեց իր զավակների արյանը, ապա դառնալով համր ու անշարժ հանդիսականների կողմը՝ ասաց ուժեղ ձայնով.

— Իսպանացինե՛ր, ես տալիս եմ որդուս իմ հայրական օրհնությունը: Այժմ մարկի՛զ, խփի՛ր առանց վախի[6], դու մեղք չունես:

Բայց երբ Ժուանիտոն տեսավ մորը, որ գալիս էր՝ հենված խոստովանահոր թևին, աղաղակեց.

— Նա սնուցե՛լ է ինձ:

Նրա ձայնը սոսկումի աղաղակ պոկեց հանդիսականներից: Խնջույքի աղմուկներն ու սպաների ուրախ ծիծաղը խլացան այս սոսկալի գոռոցից: Մարկիզուհին հասկանալով, որ Ժուանիտոյի արիությունն սպառել է, մի ոստյունով ցատկեց ցանկապատի վրայից և խոյանալով ներքև՝ ջախջախեց գլուխը ժայռերի վրա: Հիացումի մի աղաղակ բարձրացավ: Ժուանիտոն ընկել էր ուշաթափ:

— Պարո՛ն գեներալ,— ասաց քիչ հարբած մի սպա,— Վիկտոր Մարշանն ինձ մի բան պատմեց այսօրվա մահապատժի մասին: Ես գրազ եմ գալիս, որ դուք այդպիսի բան չեք հրամայել:

— Դուք մոռանում եք, պարոնա՛յք,— ասաց գեներալ Գ...տ...րն,— որ մի ամսից հինգ հարյուր ֆրանսիական ընտանիքներ լաց են լինելու և որ մենք Իսպանիայում ենք գտնվում: Ուզում եք, որ մեր ոսկորներն այստե՞ղ թողնենք:

Այս ճառից հետո չգտնվեց ոչ մի անձնավորություն, ոչ իսկ մի ենթալեյտենանտ, որ համարձակվեր պարպել իր բաժակը:

Չնայած այն պատվին, որ մատուցվում էր մարկիզ Լեգանյեզին, չնայած El verdugo (դահիճ) տիտղոսին, որ Իսպանիայի թագավորը տվել է նրան որպես ազնվականության տիտղոս, վիշտը Ժուանիտոյին կրծում է: Նա ապրում է միայնակ և երևում է շատ քիչ: Իր սքանչելի եղեռնագործության բեռան տակ կքած՝ նա կարծես սպասում է անհամբերությամբ, որ երկրորդ որդու ծնունդն իրավունք տա իրեն գնալ միանալու այն ստվերներին, որոնք ուղեկցում են նրան անդադար:

EL VERDUGO

Այս փոքրիկ պատմվածքը Բալզակը լույս է ընծայել 1830 թվականին «Զինվորական հիշողություններ, El verdugo, Իսպանական պատերազմը» վերնագրով: Հեղինակը հետագայում այդ մտցրեց «Մարդկային կատակերգության» մեջ («Փիլիսոփայական էտյուդներ» շարքում):

[1] Մարտինես դը լա Ռոզա (1789—1862) — իսպանական քաղաքական գործիչ և դրամատուրգ, որը մի առժամանակ (1839—1842 թթ.) իսպանական դեսպան էր Փարիզում:

[2] Ֆերդինանդ VII (1784—1833) — Իսպանիայի թագավոր: Նապոլեոնական կայսրության բանակը 1808 թվականին ներխուժեց Իսպանիա և հարկադրեց Իսպանիայի թագավոր Կարլոս IV-ին հրաժարվել գահից հօգուտ իր որդու, Ֆերդինանդ VII-ի, սակայն Նապոլեոնը այնտեղ թագավոր նշանակեց իր եղբայր Ժոզեֆին:

[3] Մարշալ Նեյ — տե՛ս «Վենդետտայի» N 7 ծանոթագրությունը:

[4] Դավիդ — տե՛ս «Գնդակ խաղացող կատվի վաճառատունը» պատմվածքի N 2 ծանոթագրությունը:

[5] Մյուրիլո Բարթոլոմեո Էստիեբան (1617—1682) — իսպանական նշանավոր նկարիչ:

[6] «Այժմ, մարկի՛զ, խփի՛ր առանց վախի» — հոր մահով Ժուանիտոն դառնում էր մարկիզ: